


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. սեպտեմբերին


/վերլուծություն/

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16632 գործարքներ, որոնց քանակը 2013թ. օգոստոսի համեմատ աճել է 3.3%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ՝ 28.4%-ով:

2013թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4040 օտարման գործարքների 72.2%-ը կազմել են առուվաճառքները, 27.0%-ը՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 43.9%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 41.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. սեպտեմբերին, 2013թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 11.5%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 11.2%-ով:

2013թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. սեպտեմբերին, 2013թ. օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.7%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 49.7%-ով:

2013թ. սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	սեպտեմբեր 2012թ	սեպտեմբեր 2013թ.	օգոստոս 2013թ.
Կենտրոն	418200	428000	428000
Արաբկիր	346100	356600	356500
Քանաքեռ-Զեյթուն	274200	282400	282400
Նոր-Նորք	237000	251300	251000
Ավան	246550	259500	259200
Էրեբունի	240000	249000	249000
Շենգավիթ	243500	255100	255100
Դավթաշեն	266200	275000	274500
Աջափնյակ	234000	248100	248100
Մալաթիա-Սեբաստիա	231300	241300	241100
Նուբարաշեն	141000	152500	152200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. սեպտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ օգոստոսի համեմատ, աճել են 0.04%-ով:

2013թ. սեպտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 415 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. օգոստոսի համեմատ նվազել է 1.7%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 1.7%-ով:

2013թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2012թ	սեպտեմբեր 2013թ.	օգոստոս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	113600	114900	114900
	Ապարան	50000	56700	56550
	Թալին	61200	64500	64500

Արարատ	Արտաշատ	92700	94800	94800
	Մասիս	110050	115000	115000
	Վեդի	97050	99800	99800
	Արարատ	74200	75100	75100
Արմավիր	Վաղարշապատ	153200	154150	154150
	Արմավիր	119100	121200	121200
	Մեծամոր	86500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99000	99150	99150
	Գավառ	53600	59200	59000
	Մարտունի	107200	107600	107600
	Վարդենիս	38000	44550	44500
	Ճամբարակ	23050	28200	28000
Լոռի	Վանաձոր	87200	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	51600	55000	55000
	Տաշիր	43800	47150	47000
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19800	20200	20200
Կոտայք	Աբովյան	153100	155100	155000
	Նոր Հաճն	128500	128600	128500
	Բյուրեղավան	107100	108150	108100
	Եղվարդ	109300	109300	109300
	Հրազդան	60200	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85500
Շիրակ	Գյումրի	108900	109300	109300
	Արթիկ	64800	66500	66500
	Մարալիկ	37300	40300	40100
Սյունիք	Գորիս	115300	121600	121600
	Կապան	90200	92100	92100
	Սիսիան	84000	91150	91100
	Մեղրի	71050	80300	80050
	Ազարակ	43800	46300	46200
	Քաջարան	94300	94650	94500
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	87000	95000	95000
	Եղեգնաձոր	117700	124400	124400
	Ջերմուկ	104100	112050	112050
Տավուշ	Դիլիջան	106000	113150	113150
	Իջևան	114050	118300	118200
	Բերդ	52600	60200	60000
	Նոյեմբերյան	43300	49500	49400
	Այրում	25000	31600	31600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. օգոստոսի համեմատ աճել են 0.06%-ով:

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 451 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 121, մարզերում միասին վերցրած՝ 330: 2013թ. սեպտեմբերին, 2013թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.0%-ով, ընդ որում Երևանում՝ 16.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 1.5%-ով: 2012թ. սեպտեմբերի համեմատ,

անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 26.3%-ով, ընդ որում Երևանում՝ 24.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 26.9%-ով:

2013թ. սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	սեպտեմբեր 2012թ	սեպտեմբեր 2013թ.	օգոստոս 2013թ.
Կենտրոն	466800	476100	476100
Արաբկիր	374500	383000	383000
Քանաքեռ Զեյթուն	284100	295000	295000
Նորք Մարաշ	310700	319200	319200
Ավան	263800	270500	270500
Էրեբունի	230000	239500	239500
Շենգավիթ	248000	255000	255000
Դավթաշեն	266100	276000	276000
Աջափնյակ	241000	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	230300	238000	238000
Նուբարաշեն	144500	150500	150500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. օգոստոսի համեմատ մնացել են անփոփոխ:

2013թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2012թ	սեպտեմբեր 2013թ.	օգոստոս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	134800	136200	136200
	Ապարան	54100	60050	60000
	Թալին	68650	69250	69250
Արարատ	Արտաշատ	98600	100000	100000
	Մասիս	112100	115100	115100
	Վեդի	100200	102300	102300
Արարատ	Արարատ	87300	88000	88000
	Վաղարշապատ	152300	153100	153100
	Արմավիր	105200	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94200	94800	94800
	Գավառ	52300	57100	57100
	Մարտունի	94300	96100	96000
	Վարդենիս	34000	41000	41000
	Ճամբարակ	26200	31100	31100
Լոռի	Վանաձոր	98200	100000	100000
	Ստեփանավան	87600	90000	90000
	Սպիտակ	113600	114000	114000
	Ալավերդի	46050	50200	50200

	Տաշիր	51100	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29600	30000	30000
Կոտայք	Աբովյան	154700	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120000	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	79800	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82300	83000	83000
	Գյումրի	117400	118500	118500
Շիրակ	Արթիկ	61200	63100	63100
	Մարալիկ	49500	52000	52000
	Գորիս	127000	130000	130000
Սյունիք	Կապան	98300	100000	100000
	Սիսիան	90000	96500	96500
	Մեղրի	77000	84500	84500
	Ագարակ	46300	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
	Վայք	84800	90050	90000
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	113300	116600	116600
	Ջերմուկ	122850	131300	131200
	Դիլիջան	109600	113000	113000
Տավուշ	Իջևան	122000	123200	123100
	Բերդ	58000	60100	60000
	Նոյեմբերյան	46100	48300	48200
	Այրում	34600	36250	36200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. օգոստոսի համեմատ աճել են 0.06%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 1141 միավոր /526.12 հա/ հողեր, որից Երևանում՝ 143 միավոր /9.96 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 597 միավոր /477.32 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.28 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 386 միավոր /33.18 հա/, որից Երևանում՝ 78 միավոր /5.87 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 142 միավոր /8.89 հա/, որից Երևանում՝ 60 միավոր /3.81 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 7 միավոր /5.37 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր /0.83 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 3 միավոր /0.54 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 875 միավորի /362.13 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 118 միավոր /8.52 հա/, նվիրատվության գործարքներ՝ 250 միավորի /162.47 հա/, որից Երևանում՝ 19 միավոր /0.93 հա/ և փոխանակության գործարքներ՝ 16 միավորի /1.52 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /0.51 հա/:

Հանրապետությունում 2013թ. սեպտեմբերին, 2012թ. սեպտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.4%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 11.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 40.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Վայոց Ձորի մարզում՝ 53.29 հա, որից 52.62 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.3%-ը կամ 204 գործարքներ /23.87 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 68 միավոր /1.39 հա/, իսկ 75.5%-ը կամ 661 միավորը /338.24 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 50 միավոր /7.13 հա/: 2013թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 10 գործարք /0.02 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2013թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	30	0.16	38	1.23	4	0.21	0	0.00	30	4.86	16	2.07
Արագածոտն	24	2.45	2	0.11	3	0.19	4	1.01	73	42.75	0	0.00	19	2.33	0	0.00
Արարատ	3	2.57	0	0.00	1	0.06	2	0.02	50	19.08	0	0.00	38	3.05	1	0.01
Արմավիր	2	2.31	1	0.10	0	0.00	1	0.03	61	31.83	0	0.00	40	3.78	1	0.12
Գեղարքունիք	0	0.00	2	5.04	1	0.002	5	0.14	9	23.60	0	0.00	5	0.70	0	0.00
Լոռի	1	0.14	2	0.12	3	0.22	11	0.64	28	28.06	0	0.00	5	0.95	2	0.01
Կոտայք	9	2.86	0	0.00	6	0.39	9	1.13	71	35.73	0	0.00	76	6.13	10	0.71
Շիրակ	1	1.00	0	0.00	8	0.08	2	0.04	47	40.47	0	0.00	7	1.36	2	0.03
Սյունիք	0	0.00	0	0.00	1	0.03	4	0.08	29	30.07	0	0.00	3	0.13	1	0.07
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	1	0.04	0	0.00	10	52.62	0	0.00	6	0.64	0	0.00
Տավուշ	1	0.02	0	0.00	8	0.27	11	0.41	8	5.91	0	0.00	4	0.35	3	0.25
Ընդամենը	41	11.35	7	5.37	62	1.44	87	4.73	390	310.33	0	0.00	233	24.28	36	3.27

Ստորև ներկայացվում է 2013թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	56	0.74	0	0.00	30	0.16	26	0.58	12	0.66	0	0.00	0	0.00	0	0.00	12	0.66
Արագածոտն	3	0.12	1	0.09	1	0.02	1	0.01	7	1.31	1	0.11	1	0.02	2	0.17	3	1.01
Արարատ	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	5	2.64	3	2.57	0	0.00	1	0.06	1	0.01
Արմավիր	1	0.10	1	0.10	0	0.00	0	0.00	3	2.34	2	2.31	0	0.00	0	0.00	1	0.03
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	5.184	0	0.00	2	5.04	1	0.002	5	0.14
Լոռի	6	0.14	1	0.10	0	0.00	5	0.04	11	0.98	1	0.14	1	0.02	3	0.22	6	0.60
Կոտայք	1	1.00	0	0.00	0	0.00	1	1.00	21	3.22	7	2.70	0	0.00	6	0.39	8	0.13
Շիրակ	2	0.01	0	0.00	2	0.01	0	0.00	9	1.11	1	1.00	0	0.00	6	0.07	2	0.04
Սյունիք	3	0.033	0	0.00	1	0.03	2	0.003	2	0.08	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.08
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.04	0	0.00	0	0.00	1	0.04	0	0.00
Տավուշ	3	0.03	0	0.00	1	0.01	2	0.02	17	0.68	1	0.02	0	0.00	7	0.27	9	0.39
Ընդամենը	76	2.18	3	0.29	35	0.23	38	1.66	96	18.24	16	8.85	4	5.08	27	1.22	49	3.09

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 25 գործարք /2.50 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. սեպտեմբերին, 2012թ. սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.5%-ով: Ընդ որում, Երևանում՝ նվազել է 7.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 38.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 68.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 35.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 18.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 33.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. սեպտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Միջին	Առավելագույն			Նվազագույն	Միջին	Առավելագույն
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						43	9.53	365.0	12000.0	3615.3
Ապարան	1	0.11	1165.5	1165.5	1165.5	10	4.09	86.5	2727.3	730.0
Թային						9	6.85	93.6	5494.5	682.5
Ծաղկաձոր						11	22.28	79.5	1000.0	285.5
Արարատի մարզ										
Արտաշատ						27	5.34	335.1	10833.3	2746.0
Մասիս	1	0.79	191.8	191.8	191.8	15	8.40	200.0	11904.8	3069.8
Վեդի	2	1.77	272.9	1159.3	716.1	8	5.34	207.0	10795.1	1855.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						36	17.52	294.3	9090.0	1286.6
Բաղրամյան						2	2.10	90.6	2561.1	765.3
Վաղարշապատ	2	2.31	72.0	105.0	88.5	20	9.19	444.4	11764.7	2273.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1.84	199.8	1875.0	430.2
Ճամբարակ						1	7.50	60.5	953.3	355.2
Մարտունի								51.1	2850.0	738.5
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						7	14.26	41.2	2575.1	426.6
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.14	2446.3	2446.3	2446.3	6	3.26	170.4	6424.2	567.5
Գուգարք						11	6.96	234.6	6065.9	775.0
Սպիտակ						1	0.09	250.0	5555.5	730.8
Ստեփանավան						2	1.77	90.6	1686.6	335.0
Տաշիր						4	1.96	45.3	1384.4	162.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	1.63	277.5	1621.3	787.0	34	13.27	279.3	11942.7	4225.2
Եղվարդ	2	1.07	148.5	245.0	196.8	27	11.85	174.4	11971.8	2471.4
Հրազդան						10	10.61	130.5	10256.4	1545.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.00	310.5	310.5	310.5	23	8.61	252.0	1693.1	635.6
Ամասիա						2	6.41	40.9	261.0	125.5
Անի						5	12.26	110.6	546.9	396.5
Աշոցք						1	2.00	58.5	215.8	130.0
Արթիկ						16	11.19	79.4	1428.6	425.5
Սյունիքի մարզ										
Գորիս						7	7.44	92.6	1023.2	735.0
Կապան						1	2.00	120.0	841.6	368.3
Մեղրի						4	0.25	193.0	3000.0	732.7
Սիսիան						16	20.24	46.3	1977.4	560.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						8	50.77	125.0	10000.0	1925.0
Վայք						2	1.85	58.8	1430.7	638.5
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.20	213.3	3783.8	685.5
Իջևան						2	1.46	267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան	1	0.02	4802.4	4802.4	4802.4	5	4.25	46.7	7368.4	890.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. սեպտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	38.0	1768.3	1768.3	1768.3	15	13120.2	130.7	22200.0	2580.5
Ապարան	1	1680.0	452.0	452.0	452.0	1	1200.0	124.1	609.6	390.0
Թային						2	5030.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	3900.0	60.0	214.3	91.5
Արարատի մարզ										
Արտաշատ						8	7225.0	173.9	7140.3	897.5
Մասիս	1	562.1	1261.3	1261.3	1261.3	25	18447.4	187.5	25000.0	1206.0
Վեդի						5	4870.0	126.1	5000.0	660.6

Արմավիրի մարզ										
Արմավիր						15	13798.6	131.6	9090.9	1214.0
Բարդամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						23	21347.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավատ						2	2090.0	186.6	1084.3	683.3
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի						1	1200.0	119.3	5000.0	281.4
Սևան	1	21.3	700.5	700.5	700.5			240.0	3110.4	315.0
Վարդենիս						2	3739.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	4350.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	2	1456.0	2035.0	2297.1	2166.0	2	5150.0	77.9	14083.3	1258.7
Սյիտակ	1	739.5	153.3	153.3	153.3			104.9	1348.3	206.5
Ստեփանավան								88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	5	3048.4	407.5	5426.9	2583.2	36	24317.2	264.5	35353.5	1994.3
Եղվարդ	1	899.0	2488.2	2488.2	2488.2	36	28760.0	173.6	27000.0	2856.4
Հրազդան						2	2740.0	117.7	34848.5	1317.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	195.0	2820.5	2820.5	2820.5	5	5660.0	113.6	18750.0	334.5
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	1	400.0	349.3	349.3	349.3			67.9	180.6	175.1
Աշոցք						1	6980.0	40.8	144.0	64.0
Արթիկ	4	122.0	2250.0	3933.3	3059.2	1	1000.0	111.8	5000.0	217.3
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	368.0
Կապան						2	651.0	67.9	2638.9	303.2
Մեղրի						1	600.0	68.5	632.9	217.0
Սիսիան								123.5	875.0	210.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	6361.0	96.7	7659.6	505.0
Վայք	1	350.0	931.5	931.5	931.5			120.7	1448.3	225.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	795.5	75.8	810.0	120.0
Իջևան	7	2658.0	244.2	3000.0	2077.9	3	2695.0	74.1	14423.1	515.0
Նոյեմբերյան								125.0	1948.1	230.0

2013թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 653 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 73.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. սեպտեմբերին, 2013թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 5.4%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ՝ 7.2%-ով:

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 43 բնակարանների, 75 անհատական բնակելի տների, 262 հասարակական, 76 արտադրական նշանակության օբյեկտների, 183 հողերի և 1 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 10 վարձակալության գործարքների, այդ թվում 4 միավոր /0.02 հա/ կառուցապատման իրավունքով, որոնց քանակը 2013թ. օգոստոսի համեմատ աճել է 25.0%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ՝ 66.7%-ով: 2013թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 306.92 հա հողերից 0.93 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 305.99 հա հողերից 288.73 հա կազմում են

գյուղատնտեսական նշանակության, 5.90 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 112.82 հա, որից 111.75 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2029 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.2%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. օգոստոսի համեմատ նվազել է 2.7%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 28.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /53.3%/, առանձնատների /22.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.7%/ և հողերի /7.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1166 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. օգոստոսի համեմատ նվազել է 6.3%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ՝ աճել 55.9%-ով:

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 151.53 հա հողեր, որից 22.32 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 75.6%-ը կամ 114.61 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 1.39 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 77.10 հա, որից 75.17 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 161 գործարքներ, որից 102-ը՝ Երևանում: 2013թ. օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 16.6%-ով, ընդ որում Երևանում՝ 31.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 34.1%-ով: 2012թ. սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 54.8%-ով, ընդ որում Երևանում՝ 52.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 59.5%-ով:

2013թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1557 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. օգոստոսի համեմատ նվազել է 14.9%-ով, իսկ 2012թ. սեպտեմբերի համեմատ՝ 13.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 9.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.1%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե